

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ազգային Պատրիարքարանի

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ


ԱՏԵՆ ԱՔՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄԻՆ

ՆԻՍՏՔ

11 ՅՈՒՆԻՍ 1881



Կ. ՊՈԼԻՍ

1881

ԴԻԻԱՆՔ ԱՋԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Արեւապետ
Առաքել էֆէնտի Ալթուն Տիրրի	Բ. »
Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան	Գ. »
Միհրան էֆէնտի Զօպանեան	Ա. Արեւապետ
Նշան էֆէնտի Պոյաճեան	Բ. »
Տիգրան էֆէնտի Հինքեարպէյեանեան	Գ. »

Ձեռնաստրեան դիւան	Յարաբերութեան դիւան
Տ. Մատթէոս եպիս. Իզմիրլեան	Յարութիւն էֆէնտի Նորատունկեան
Տ. Գէորգ Մ. Վարդ. Բուսճուզլեան	Ալիքսան էֆէնտի Խօրասանճեան
Պապի էֆէնտի Պապօեան	Ղազար էֆէնտի Հովուեան
Դաստիակութեան դիւան	Իրաւաստրեան դիւան
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան	Եղիշէ վարդապետ Այվազեան
Լէւոն էֆէնտի Գափամաճեան	Կառնիկ էֆէնտի Յովակիմեան
Գասպար էֆէնտի Զերազ	Աւետիս էֆէնտի Պէշիբեան
Կայրաւոնց դիւան	Նախաձեռնութեան դիւան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան	Առաքել էֆէնտի Ալթուն—Տիրրի
Աբրահամ էֆէնտի Մուրատեան	Նշան էֆէնտի Պոյաճեան
Մատթէոս էֆէնտի Ալիքսանեան	Յովհաննէս էֆէնտի Թորոսեան
Համարակայութեան դիւան	Խմբագրութեան դիւան
Յակոբ էֆէնտի Արշակ	Կարապետ էֆէնտի Խլթիւճեան
Ստեփան էֆէնտի Փափազեան	Աւետիս էֆէնտի Սուրէնեան
Յակոբ էֆէնտի Հաճեան	Մկրտիչ էֆէնտի Մէզգուրեան

Ելեմտից յանձնախումբ

ԱՋԴԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄԹ

Ն Ի Ս Տ Գ.

11 ՅՈՒՆԻՍ 1881

ՆՈՒՍՏԱՆ. — Սրբազան Պատրիարք Հայր
 ԱՏԵՆԱՊԵՏ. — Յարութիւն էֆէնտի Մէրեւէմ-Գուլի

ԱՋԴԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԵՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԵՔ	Ա. Վ. Իճակ	47
1 Կարապետ եպ. Սերոբեան	Գումգաբու, Կեօիկ վաշա	48
2 Սիմոն եպ. Սէֆիլեան	Է. Գումգաբուի դուրս	49 Միհրան Պանճէզափուլն
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. Պ	21 Գրիգոր Պէրպէրեան	50 Պօղոս Թորոսեան Բ. 3
4 Կարապետ Գ. Սէթեան	22 Կարապետ Աղաբաճաճեան	51 Տրդատ Փափազեան
	23 Համբարձում Մազպուլեան	52 Յակոբ Հաճեան
	24 Մինաս Գափամաճեան	(Գ. Վ. Իճակ)
	25 Սարգիս Աղաբէկեան Բ. Պ	Գասքմ բաշա
	26 Սենեքերիմ Մանուկեան Բ. 3	53 Գասպար Զէրազ Բերա
	27 Բարթոլ Քիւրքճիպաշեան	54 Արիկ Ունճեան Բ. 2
	28 Գէորգ Ապտուլաճեան Բ. 3	55 Գրիգոր Սէլիմիճեան Բ.
	29 Յ. Մէրեւէմ-Գուլի	56 Գրիգոր Օտեան Բ. Պ
	30 Տիգրան Հինքեարպէյեան.	57 Ղազար Հովուեան
	31 Աւետիս Սուրէնեան	58 Յարութիւն Նորատունկեան
	32 Տօքթ. Յ. Թիրեաքեան	59 Յարութիւն Պէկեան
	33	60 Նշան Պոյաճեան
	34	61 Վիլէն Օրմանեան
	35	62 Տէլէմաք Էքսէրճեան
	36	Միջազիւղ
	37	63 Յակոբ Պ. Նորատունկ
	(Բ. Վ. Իճակ)	64 Տիգրան Եւսուֆեան Բ. Պ
	Պէշիկբաշ	65 Մկրտիչ Գազանճեան
	38 Ալիքսան Խօրասանճեան Բ. 3	66
	39 Բարսեղ Հալաճեան	67
	40 Յովհաննէս Քէրէնոճեան	Պէյգօզ Է. Ղալափա
	ԵՆԵՐԿԱՐՈՒ	68 Միքայէլ Մամիկոնեան
	41 Լեւոն Գաբամաճեան	(Գ. Վ. Իճակ)
	42 Մարուզէ Յրէնկեան Բ. 2	Քուզիուճնուգ Է. Իճակի
	43 Պօղոս Էքսէրճեան	70 Գրիգոր Ներսէսեան
	44	70 Մկրտիչ Մէզգուրեան
	Իսկիւտար Ս. Խաչ	
	45 Սիմոն Յէլէկեան	
	46 Տօքթօր Յ. Շիշմանեան Բ. 2	



71 Գառնիկ Յովակիմեան	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
72 Կարապետ Հազարեան Բ Նարլըգաբու.	Կարին	121 Ատեփան փառազեան
73	101 Սերոբէ Աղնաւորեան	Տիվրիկ]
Եկեղիմանայի Սամարիոյ	Քեօբանէա	122 Նշան Գարագոշ Բ
74	102	Ձեյրուն Ե. Մարաշ
Թօփգափու:	Անդրիանուպօլիս	123
75 Տ. Կ. Հիւնքեարայէյնեան	103 Յակոբ Պարոնեան	Տրապիզօն
Էյուպ Ս. Եղիա Ե. Ս.	Նիկոմիդիա	124
Աստուածածին	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	Պաղտատ
76	105	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 3
Գուրուհէլմէ	Ղարանխար	Տիգրանակերտ
77 Համբարձում Իրէքճեան	106	126 Միհրան Զօպանեան
Հիսար Ե. Պօյաճի զիւղ	Արաբկիր	Վան
78 Սենեքերիմ Կիւլպէնկեան	107 Կարապետ Խօշկիկեան Բ	127 Աղքամար
Նոր զիւղ Ե. Սրեկիա	Բաղէշ	128
79	108	Հալեպ Ե. Այնթապ
Պալատ	Պրուսա	129
80	109 Քրիստոստուր Ղազարոսեան	Սեբաստիա
81	Եւդոկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան Բ
82	140	Ռուսնուգ
Քարակեօմրիւկ	Ամասիա	131
83 Յովհաննէս Թորոսեան	141 Համբարձում Ալաճաճեան Բ 2	Կարս
84 Կարապետ Փանոսեան	Բալու	132 Արրահամ Յ. Այվազեան
(Վ. Վ. Վիճակ)	142 Յովհաննէս Աղնաւորեան Բ	Զմշկածաղ
Սամարիա	Եղեսիա	133 Համբարձում Սարգէշիչեան.
85 Այլքսան Պէշիրեան	143 Յակոբ Իւթիւճեան Բ	Գաղատիա
86 Եղիազար Մէլիքեան Բ 3	Մանճրլըխ	134
87 Մինաս Ճաֆճաֆեան Բ	Հաճըն	Ատունա
88 Նազարէթ Շահպազեան Բ 2	145	135
89 Յարութիւն Թիւլեան Բ	Երզնկա	Սդերդ
90 Յակոբ Արշակ	146 Ռէթէոս Պէրպէրեան	136 Մատթէոս Ալէքսանեան
91 Սեպուհ Թիւլսիւզեան	Թեքիրտաղ	Եօզղատ
92	147 Տիգրան Գ. Սինանեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան Բ 4
93	Կեսարիա	Մալաթիա
94	148 Գէորգ Գլըճճեան	138 Գէորգ Վարդանեան Բ
Խասգիւղ	Խարբէրդ	Իզմիր
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ 2	149	139 Պապի Պապօեան
96 Ռէթէոս Պէշիկեան Բ 2	Պալքրեսիք	Եգիպտոս
97 Սարգիս Քալուքճեան Բ 2	120	140 Արրահամ Մուրատեան
98 Ռէթէոս Թաղէոսեան		
99 Ռուբէն Պուլկուրեան		
400		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Տեղեկագիր Երեսփոխանական նորոգ ընտրութեանց .
- Բ. Կաղնութիւն Մայր Դիւանի .
- Գ. Կաղնութիւն Նախաքննիչ Դիւանաց .
- Դ. Մրագիր թաղային մատակարարութեան օրինաց . — Շարունակութիւն վիճարանութեան ի վերայ Տեղեկագրի Ատենապետաց Դիւանի :

Ատեանը բացուեցաւ ժամն Յին ընդ առ-
ժամեաց Ատենապետութեամբ երկրագոյն Ե-
րեսփոխան Գ. Ղազարոսեան ԼՖէնտիի , որ
հրատիրեց զՏ. Գրիգորիոս Արրազան նախագա-
հել այսօրեայ նիստին :

Ատենաղարի աթոռն անցաւ , Ժողովին
հրատիրանօք , կրտսերապոյն երեսփոխաններէն
Զօպանեան Մ. էֆէնտիին :

Ներկայ Երեսփոխանաց թիւն էր 47 , որ
68 ի յանգեցաւ ի վերջէ :

Տ. Գրիգորիոս Եղիսկապոս օրհնեց զժո-
ղովը Տէրունական աղօթքով , որոյ ձայնակե-
ցան Երեսփոխանք յոտնկայս և զլիւրաց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.— Արրազան Հայր , Երես-
փոխան մէկ յանի ազգաց մէջ խորհրդարանաց
բացումը աղօթիւք տեղի կունենայ , սակայն
մեր ազգին մէջ այս բարի սովորութիւնը ցարդ
անծանօթ մնացած էր . ուստի ի դիմաց Երես-
փոխանական Ժողովոյ կը փութամ իմ շնորհա-
կալիքս յայտնել առ Ձերդ Արրազնութեան , որ
առաջին անգամն լինելով այս բարի սովորու-
թեան սկիզբ կուտայ :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Տեղեկագիրք Երեսփոխանական նորոգ ընտրութեանց .

Ատենապետ էֆէնտի անմիջապէս օրա- կարգը ձեռք առնելով, ժողովոյ կը ներկայէ ե- րեսփոխանական նորոգ ընտրութիւնները, վար- չութեան պաշտօնագրէն սկսելով :

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի Աղղային ժողովոյ

Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ թաղին Ընտրող ժողովին կողմէ Պատ- ըխարքարանս հասած տեղեկագիր մը կը ծանուցանէ թէ նոյն թաղէն պակասած երեք երեսփոխանաց տեղ նորոգ ընտրու- թիւն կատարուելով՝ Երեսփոխան ընա- րուած են ,

1. Վիլչէն էֆէնտի Գապառաճեան
2. Մինաս » Էմիրեան
3. Թաղւոր » Էրկանեան

որ յանձն առած են վարել երեսփոխա- նական պաշտօնն :

Նոյնպէս Գուրուչէշմէի, Արնաւուա դիւղի և Պէպէքի միացեալ թաղից Ընտ. ժողովոյ տեղեկագիրն կը ծանուցանէ թէ նոյն թաղից կողմէ պակասած մէկ երես- փոխանին տեղ նորոգ ընտրութիւն կա-

տարուած և Երեսփոխան ընտրուած է ,
4. Համբարձում էֆ. Իփէկճեան որու յանձնառութիւնն սպասուեալ է իւր գրով :

Աղղային վարչական Խորհուրդն յիշեալ չորս նորընտիր երեսփոխանաց ընտրելութեան հանդամանքներն քննե- լով՝ ըստ ամենայնի համաձայն կը գըա- նէ Ազգ. Սահմանադրութեան և կը փու- թայ ներկայ ծանօթագրով ընտրական տեղեկագրերն ընտրելոց յանձնառու- թեան գրեթէ հետ կցօրդուած , ներ- կայել Պատկառելի ժողովոյդ ի քննու- թիւն և ի վաւերացումն :

Ի դիմաց Ազգ. վարչ. Խորհրդոյ

Վ. Ատենապետի Վ. Ատենապետի
Ս. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Կ. Պոլիս 10 Յունիս 1881

1 .

Տեղեկագիր Սամաթիոյ .

Ամենապատիւ

Սրբազան Պատրիարք Հայր .

Ըստ բարձրաշնորհ Սրբազնութեանդ թիւ 203 և Ապրիլ 17 թուական հրա- հանգին՝ թաղիս կողմէ հրաժարեալ 3 երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութիւն կատարելու համար Ընտր. ժողով գու- մարելով և դիւանի ընտրութիւն կազ- մելով՝ ըստ Սահմանադրութեան Ընտր. ժողովն ընտրելեաց եռապատիկ ցանկ մը պատրաստեց և ընտրողաց ցանկին

հետ յետ քննութեան Եկեղեցւոյ բակը կախեց ու թօրեայ պայմանաժամու ի դիտողութիւն թաղեցւոց , և նամակա- հրաւիրեց զընտրողս , որ իրենց ընտրա- կան պարտաւորութիւնը կատարեն :

Հետեապէս Մայիս 31 կիրակէ օր քուէարկութիւնը կատարեցաւ ժամ 3 1/2ին և 600 ընտրողէն միայն 112 քուէարկու- ունեցանք , որոց 81 ը անձամբ և 31 ը նամակաւ և քուէհամարի դարձ սղութիւն լինելով բացարձակ առաւելութեամբ Մեծ. Վիլչէն էֆէնտի Գապառաճեան 66 քուէ ստանալով՝ Երեսփոխան ընտրուե- ցաւ և համեմատական առաւելութեամբ քուէ ստացան .

Մեծ. Մինաս էֆ. Էմիրեան	49
» Թաղւոր » Էրկանեան	35
» Կարապետ » Գիւրքճիխանլեան	34
» Առաքել պէյ Յ. Տատեան	30

որոց համար վերստին քուէարկութիւն կատարուելով ամսոյս 7 կիրակէ օր , 600 քուէարկուներէ 119 քուէարկու- ունեցանք , որոց 88 անձամբ և 31 նա- մակաւ , և արդիւնքն եղաւ ,

Մեծ. Մինաս էֆէնտի Էմիրեան	88
» Թաղւոր » Էրկանեան	85

որք երեսփոխան ընտրուեցան :

Ուստի Ընտրող ժողովս սոյն ընա- րութեան անմիջապէս զինի՝ ընտրելոց հաւանութիւնն ստանալու համար մաս- նաւոր նամակ գրեց և անոնց հաճու- թեան գիրն ստանալով՝ ներփակեալ կուղարկէ Ձեր Բարձր Սրբազնութեան ի պարտ ու պատշաճ անօրէնութիւն :

Նախագահ Ընտրող ժողովոյ
ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Գորտղիչ Սամաթիոյ

Ատենապետ Ատենապետ
Պետրոս Զիճեան Մինաս Էմիրեան

Թաղական Խորհրդոյ

Ատենապետ Ատենապետ
Յ. Սամուէլեան Տ. Սանակեան

9 Յունիս 1881

Ի թաղ. Խորհրդարան Ս. Գ. Եկեղեցւոյ
Սամաթիոյ

Յանձնառագիրք ընտրելոց .

Գեր. Սրբազան Հայր

Թաղեցւոց իմ վրայ ունեցած հա- մարմանցը արդիւնքը ըլլալով երեսփո- խան ընտրուելս կը ծանուցանէք ինձ , թէպէտ սոյն փախուկ և միանգամայն ազգօգուտ պաշտօնը ստանձնել կարի իմն դժուար կերեր ինձ , բայց ըստ կարեաց յօգուտ ազգիս աշխատիլ պարտ անձին համարելով կընդունիմ զայն , և խնդրեմ չմոռնալ զիս Ձեր աղօթից մէջ ի յաջողութիւն :

Մնամ յարգանօք

Ձերդ Գերապատուութեան

Խոնարհ ծառայ

Մինաս Էմիրեան

1881 Յունիս 9 ի Սամաթիոս

Գեր. Նախագահ Սրբազան Հայր ,

Երեսփ. Ընտր. ժողովոյ Սամաթիոյ

Ընկալայ երեկեան թուականաւ և Ձերդ Սրբազնութեան ստորագրութեամբ մի պատուարեր թուղթ , որ յետ շնոր- հաւորելոյ երեսփոխան ընտրուելս , յանձ-

նարարէր ինձ՝ փութով յղել հաւանութեան զիր առ Ընտրողական Պատուարժան Ժողովդ :

Սոյն մեծ պատիւն որ Ազգին բաղդին վրայ մեծ կշիռ ունեցող բարձրագոյն ատեանի մը մէջ ինձ ամուսնի կը շնորհէ, անկարելի պիտի լինէր ինձ ընդունիլ անարժանութեանս խոստովանութեամբ եթէ չըլինէի ստիպուած յարգել այն բարձր համարում զոր Ազնիւ Սամաթիացիք ինձ ցուցանել յօժարեցան :

Ուստի ժողովրդային վեհապետութեան հրամանաց խոնարհելով կընդունիմ զայդ պաշտօն, և կը խնդրեմ, Սրբազան Հայր, որ հաճիք հաղորդել շնորհակալեացս հաւաստին անոնց որք անդր քան զարժանիս պատուել ուղեցին զիս իրենց քուէներովս :

Մատչելով ի համբոյր Սրբոյ աջոյգ Գեր. Սրբազան Հօրդ մնամ ամենախոնարհ յարգանք

Թ. Երկանեան

8/20 Յունիս 1881 ի Սամաթիա

Յարգոյապատիւ և Սրբազան Հայր Նախագահ Ընտր. Ժողովոյ

Անարժանս՝ թաղիդ կողմանէ երեսփոխան ընտրուելուն համար, ինձ ըրած բարեմաղթութեանց նախապէս շնորհակալ եմ, որ նկատողութեան առնելու հաճեցաք սղնուասիրտ թաղեցւոյդ այս նորոգ ընտրութեանը մէջ ինձ ցոյց առած սիրոյն և մեծարանաց արգասիքը : Սըրբազան Հայր, Ձեր և այլոց համակրու-

թիւնը շահելու համար մինչև ցայսօր արժանաւոր գործ մի ըրած չըլլալուս, քուէից առաւելութիւնը վաստակելու պատիւն երբէք մտքէս չէի անցներ : Սակայն ազգասէր անձանց յիս ունեցած համարման փոխարէն, իմ կարողութենէ վեր եղած սոյն պաշտօնը, սիրով և հաճութեամբ կընդունիմ :

Յարգանաց ողջոյնս մատուցանելով

Մնամ Սրբազնութեանդ

Խ. Ծ.

Վիչէն Գապառաճեան

8 Յունիս 1881, Եկտի գուլէ

[Յետ ընթերցման]

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ նստին որոշման համեմատ, ընտրելոց յանձնառագրերը չեմք կարդար և միայն ատենագրութեան մէջ կանցնեմք :

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛ :

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Գիւանը չընորհք թո՛ղ ընէ տեղեկութիւն տալու մեզ թէ՛ ժողովն անցեալ նստին ի՞նչ պատճառաւ չուղեց լսել յանձնառագրոց ընթերցումն, և թէ անխտիր ամեն յանձնառագիր չը պիտի կարդացուի. վասն զի կը հասկնամ որ ժամանակին խնայելու համար՝ պարզ յանձնառագրերը չը կարդացուին, բայց երբ ուշադրութեան արժանի կէտ մը պարտնակեն, անշուշտ պէտք է զխոնայ դոյն ժողովն, ընտրութիւնը վաւերելէ յառաջ :

ՁՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Առժամեայ Ատենագիր) Գիւանը առժամայն կարդեալ լի-

նելով, չզխտեր այս յանձնառագրերուն պարունակութիւնը :

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Փախաբելի է որ Գիւանը կարդացած ըլլոյ կանխառ ժողովոյն ներկայացնելիք թղթերն, և ասոր համար ժամանակ տրուի իրեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Առժամեայ Գիւանս ժամանակ չունէր կանխառ դանոնք կարդալու ուստի եթէ ժողովը կուզէ՛ կը կարդամք այժմ :

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Եթէ պարզ յանձնառագրեր չեն :

ՁԱՅՆԵՐ. — Շատ լա՛ւ, կարդացէ՛ք :

Հետեւորար Ատենագիր Էֆէնտին կը կարդայ դանոնք, [Տես երես 81, 82] :

Ժողովն յանձնառագրերն ալ լսելէ յետոյ, Սամաթիոյ տեղեկագրոյն վրայ զխոնարհութիւն ընող չը լինելով, Ատենագրեալ Էֆ. ընտրութեան արդիւնը բռնի կը դնէ որ միաձայնութեամբ ԿԸՆԳՈՒՆՈՒԻ :

Հետեւորար Ատենագրեալ Էֆէնտին երեսփոխան կը ՀՈՉԱԿԷ

Վիչէն Էֆէնտի Գապառաճեան
Թագուր Էֆէնտի Երկայնեան
Մինաս Էֆէնտի Էմիրեան

2.

Տեղեկագիր Գուրուչէշմէի, Արևառուս գիւղի և Պեպիքի միացեալ բաղից :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգային Ժողովոյ

Ըստ հրամանի Բարձր Սրբազնութեանդ Գուրուչէշմէի, Առնալուս քէոյ և Պէպէք միացեալ թաղս Գ. փիճակագողարեալ երեսփոխանին տեղ նոր ընտրութեան ձեռնարկեց, և նախնական օրինական պատրաստութիւններն տեսնելէն յետոյ՝ Յունիս 7 կիրակի օրն ի քուէարկութեան հրաւիրեց իր ընտրողները, որք են թուով 130 որոցմէ 86 ին մասնակցութեամբն Երեսփոխան ընտրուեցաւ բացարձակ առաւելութեամբ քուէ

Համբարձում էֆէնտի Իփէկճեան 52 Սոյն ընտրելոյն յանձնարարութիւնն ալ ներկայեալ նամակաւ տպահովելով, մատուցանեմք Ձերդ Բարձր Սրբազնութեան սոյն տեղեկագիրս ի վաւերացումն :

Մնամք խորին յարգանք
Նախագահ Ընտրողական Ժողովոյ
ՊԵՏՐՈՍ ԳԱՀ. ՓԱՓԱՋԵԱՆ
Ատենագիր Ատենագրեալ
Գ. Կ. Գաբազալ Յակոբ Եազբճեան
1881 Յունիս 8 Գուրուչէշմէ

Յանձնառագիր ընտրելոյն.
Արժանապատիւ Հայր
Ընկալոյ Ձեր Արժանապատուութեան յ7 ամսոյս տողեալ նամակն, որով հաճած էք իմացնել ինձ թէ Գուրուչէշմէ, Արնալուս գիւղ և Պէպէք միացեալ թաղերու ընտրողաց կողմէն Երեսփոխան ընտրուիլս :
Շնորհակալ եմ, Արժանապատիւ

Հայր, յիշեալ Մեծ. Ազգայնոց իմ վրայ
ունեցած վատահաւթեան համար, և կը
խօստանամ ինձ յանձնուած պաշտօնն
խղճի մտօք կատարել:

Ընդունեցէք խորին յարգանացս
հաւաստիքն
Հ. Իփեքճեան

20 Յունիս 1884, Կալաթա

Գուրուչէշմէի, Արճաւուտ գիւղի և Պէ-
պէքի միացեալ թաղից տեղեկագրոյն վրայ գի-
տողութիւն ընող չը լինելով, բուէի զրուեցաւ
և միաձայնութեամբ ԸՆԳՈՒՆՈՒՆԵՑԱԻ Ժողովն:

Հետեւորար Ատենապետ Էֆէնտին Երես-
փոխան ՀՌԶԱԿԵՑ

Համարձու՞մ էֆէնտի Իփէքճեան:

Եւ զի Իփէքճեան Էֆէնտի Կրթական Խոր-
հրդարանը կը գտնուէր, Նախագահ Սրբազան
Հօր հրահրանաց վրայ, եկաւ բազմեցաւ ի
չարս Երեսփոխանաց:

3.

Տեղեկագիր Միջագիւղի և բողոքագիր ընդ-
դէմ Ընտրող. Ժողովոյ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինչպէս կը յիշէք,
անցեալ նստին Միջագիւղի ընտրութեան զէմ
և նոյնպէս նոյն գիւղի Թաղ. Խորհրդոց զէմ,
մէյ մէկ բողոքագիր եկած էր, որով ընտրու-
թիւնը չիրցաւ վաւերանալ և խնդիրն այս նըս-
տին թնայ: Այժմ պէտք էր այդ խնդիրը ձեռք
տանալ, սակայն այդ բողոքագիրն ի տարրան
թնայած լինելով, հիմայ մարդ զրկեցինք դոնի

րերեւու: Արդ՝ մինչև որ դայ այն, մենք անց-
նիմք Մայր Դիւանի ընտրութեան:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Հաճեցէք
տեղեկութիւն տալ թէ՛ ի՞նչ վիճակի մէջ մեզ
պիտի դայ, տամարագրեալ և ստորագրու-
թիւնը վաւերացած, թէ՛ անցեալ նստին ե-
կածին պէս օրինական հանգամանքէ զուրկ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ոչ. տամարագրեալ
է այս անգամ:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Լաւ:

Ժողովը կը հաւանի ձեռնարկել Մայր Դի-
ւանի ընտրութեան, անկից ետքի թողով Մի-
ջագիւղի ընտրութեան խնդիրն:



Կազմութիւն Մայր Դիւանի.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այժմ Մայր Դիւանի
ընտրութեան պիտի սկսիմք: Նախ Ա. Ատե-
նապետը դաս պիտի ընտրուի, ինչպէս օրէն
է. ուստի, մէկ անձի անուն պիտի գրուի բը-
ւէթագիրն մէջ:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՅ. — Դիւանը չը բարե-
հաճի՞ր արդեօք Յ վայրկեան միջոց ընտրել մեզ
որպէս զի կարենան Երեսփոխանք գաղափա-
րաց փոխանակութիւն մ'ընել:

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Շատ լաւ կը
լինի որ զէթ 10 վայրկեան դողար տրուի ժո-
ղովոյն, որպէս զի Երեսփոխանաց ընդհանուր
ցանկը սըբէ անցնելու միջոց ունենամք: Այս
անգամ բազմաթիւ նորընտիր պաշտօնակիցներ

ունիմք, և թերեւս ինձ պէս շատեր՝ իրենց
յիշողութիւնը նորագելու համար՝ Երեսփոխա-
նաց ցանկը միանգամ քննելու պէտք ունենան:

Շատեր կը կրկնեն Մէրեքէմ-Գուլի Էֆէն-
տինն առաջարկին, և հետեւորար Ատենապետ
Էֆէնտի 10 վայրկեան համար ատենանը կը վա-
կէ: Եւ յետոյ վերստին բանալով զայն քուէ-
համարի քննիչը կը կարգէ վիճակաւ:

Տ. Սուրխաս Քուհ. Մայր Եկեղեցոց
Կարապետ Էֆէնտի Իթիւճեան
Մատթէոս » Ալիքսանեան
Համարձու՞մ » Սարբէշիչեան

Եւ կը հրահրէ զԵրեսփոխանս Ա. Ատե-
նապետի ընտրութեան համար իրենց քուէն
տարաւ:

Քուէարկութիւնն ու քուէհամարը կատար-
ուելով, ասոնց արդիւնը կը յայտնէ որ՝ Ա.
Ատենապետութեան համար 54 քուէարկուաց
բուէներէն ստացած են,

Յ. Մէրեքէմ-Գուլի Էֆէնտի	54	քուէ
Չանազան անձինք	2	»
Ճերմակ	1	»

Սոյն քուէարկութեան մէջ ձեռնպահ կը
թեան Տօքթ. Հիւնքեարպէյեանեան, Տօքթ.
Թիրեարեան, Ա. Սուրենեան և Կ. Փանասեան
Էֆէնտիք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մէրեքէմ-Գուլի Էֆէն-
տին 2եր քուէից ամենատուար մեծամասնու-
թեամբն՝ 54էն 51ով ժողովոյս Ա. Ատենապետ
ընտրուած է: Այսպիսի համակրալից ընտրու-
թիւն մ'իւր անձ խառնի արժանեաց ապացոյցն
ըստով, կը ընդհանուրեմ զինքն և կը հրահի-
րեմ բազմիւ յաթոս իւր պաշտօնին:

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Յանձնու չը-
նարհակալ եմ Ազգ. Ժողովոյց այնքան համակ-

բանօք ինձ վերընծայած պատուէն, զիս միա-
համուտ իրեն Ատենապետ ընտրելով: Բայց այս
պատիւն իմ արժանիրէս բարձր է, և ես չպի-
տի կարենամ իմ վերայ զրուած անկալու-
թեանց արդեամբ սրատասխանել, վասն զի...

Բազմաթիւ նատարաններէ կշտապեն ընդ-
միջէլ Մէրեքէմ-Գուլի Էֆէնտի խօսքն, յայ-
տարարելով թէ աւելորդ է հրաժեշտ փորձել,
զի արամալիր չեն ընդունելու:

ՄԵՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — (Շարունա-
կելով) Շնորհ ըրէք հանդարտիւ և վայրկեան
մ'աշտարութիւն ընծայել իմ խօսքերուն, որք
ժողովոյց համար են աւելի, քան թէ իմ ան-
ձիս:

Ատենապետ մ'այնպիսի հանգամանաց մէջ
պէտք է գտնուի, որոցմով կարենայ գոհացը-
նել զԺողովն: Թէպէտ ես ինքս ամեն կարելի
արամաղրութիւն կրնամ ունենալ իմ արարքս
կատարելու, եւ կրցամ գոհողութիւնս ընելու
առ այս, թէպէտ եւ կրնամ հաւատարմ որ ժո-
ղովի լիովն վստահութիւն ունեցած լինի իմ
վերայ, և իմ պատիաստութեանց ներողամիտ լի-
նելու պատրաստակամութիւն, և սակայն դարձ-
եալ կարեւոր մի կէտ կը մնայ անդարմանելի:
— Ատենապետի պաշտօնը՝ ժողովոյ ժամերէն
գուրս՝ անհրաժեշտ աշխատութիւններ ունի,
որ մի քանի սրտով ժամանակ կը զրուեն,
մինչդեռ ես՝ անձնական բազմազրազ գործե-
լով պաշտարեալ՝ չեմ կարող գտնել այնչափ
ատեն՝ որչափ սկէտք է այն ծանր պաշտօնը
խղճի մտօք կատարելու և ժողովի գոհ ընելու
համար:

[Մերժողակա՞ն ցոյցեր]

Ի վերայ այս ամենայնի կը տեսնեմ որ
այս խօսքերս զՁեզ կը յուզեն, ուստի պիտի
հնազանդիմ Ձեր միածոյն կամոց, և ժողո-
վոյց նոր զրուում չպատճառելու համար՝ պի-
տի ընդունիմ առ այժմ Ատենապետութեան

պաշտօնն, որպէս զի կատարուին անմիջապէս Ա. նստէն ի վեր յապաղեալ ընտրութիւններն Մայր և Նախարանիչ Դիւանաց, և Ժողովոյ օրինական արգելքներէ ազատելով կարենայ իւր աշխատութեանց պարասիլ: Եւ ես պիտի ջանամ շարունակել Ատենապետութիւնը, մինչև որ նախորդ շրջանէն թերի մնացած թաղային օրինաց ծրագրի բնութիւնն աւարտի, զի այդ օրէնք անհրաժեշտ պէտք մ'է այսօր, թաղային մատակարարութիւնը վարչական նոր կազմակերպութեան համաձայնեցնելու համար: Իսկ այնուհետև արժանաւորագոյնը պէտք է դայ պաշտօնն ստանձնել:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Բոլոր Ատենադրութիւնք կը վկայեն թէ՛ նախընթաց շրջանին մէջ Ձեր ատենապետական պաշտօնով ըստ ամենայնի գոհ ըրած էք զԺողովն: Եւ ըստ որում նիստերն այժմ առաւօտները տեղի կունենան, այս պարագան բաւական զիւրութիւն կընծայէ Ձեզ: Մանաւանդ որ Ձեր ձեռնհասութիւնը բաւական է այսուհետև ալ Ժողովը գոհ ընելու: Հետեւաբար՝ ինչպէս ես՝ նոյնպէս և ոչ մի Երեսօխտան, կարծեմ, կընդունի Ձեր այդ պայմանը:

ՁԱՅՆԵՐ. — Անշուշտ, անշուշտ:

Սոյն միջոցին Մէրեթ-Գուլի էֆէնտի Ատենապետի աթոռն անցած լինելով, շնորհակալութիւն կը յայտնէ Երեսօխտանաց կրկնած համակրալից զգացումներէն, և աղաչելով ըզ Ժողովն որ իւր խօսքերը քաղաքավարական ասացումներ չկարծեն և զանոնք իրենց անկեղծ իմաստովը մեկնեն, ձեռք կառնու օրակարգին շարունակութիւնն, հետեւեալ կերպիւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ երկու Դեր-Ատենապետաց ընտրութիւնը պիտի կատարէք, Երեսօխտան Տեարք: Կը հրաւիրեմ զՁեզ եր-

կանուն քուէ պատրաստել անոնց ընտրութեան համար: Այս անգամ երկերկու անուն պիտի գրէք Ձեր քուէթղթերուն մէջ, և ինչպէս զիտէք, առաւելագոյն քուէ ստացողը Բ. Ատենապետ պիտի լինի, և անկէ անմիջապէս նըւազ քուէ ստացողը՝ Գ. Ատենապետ:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ըստ որում բազմաթիւ նոր Երեսօխտաններ ունիմք այսօր, կազաչեմ, Ատենապետ էֆէնտի, որ ընտրութեան մասին օրէնքին տրամադրութիւնը մի անգամ կարգալ տալու շնորհ ընէք:

Ատենադպիր էֆէնտին կը կարգայ ներքին կանոնադրին 509 յօդուածը. և ապա քուէարկութիւնը կսկսի, որոյ կը մասնակցին 55 Երեսօխտանք:

Յետոյ քուէհամարը կատարուելով արգիւնը կը լինի,

Առաքել էֆէնտի Ալթուն Տիւրքի	33
Գրիստոստուր » Ղազարոսեան	22
Յարութիւն » Նորատունկեան	20

Եւ մնացեալ քուէներն 14 անձանց վրայ 6 էն մինչև 1 տարածեալ:

Սոյն քուէարկութեան մէջ ձեռննայահ կը մնան Տօքթ. Կ. Հիւնքեարպէյէնտեան, Տօքթ. Թիրեարեան, Ա. Սուրէնեան և Կ. Փանոսեան էֆէնտիք:

Ատենապետ էֆէնտին քուէարկութեան արգիւնը Ժողովին հաղորդելով, Բ. Ատենապետ ԿԸ ՀՈՉԱԿԷ՛ զԱռաքել էֆէնտի Ալթուն Տիւրքի, և Գ. Ատենապետ՝ զԳրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան:

Ապա Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ զԵրեսօխտանս եռանուն քուէ պատրաստել երեք Ատենադպրաց համար:

Քուէարկութիւնն ու քուէհամարը կատարուելով, արգիւնը կը լինի,

Թիւ քուէարկուաց 50	Քուէ
Միհրան էֆէնտի Չօպանեան	43
Նշան » Պոյաճեան	34
Տիգրան » Հիւնքեարպէյէնտեան	30

Եւ մնացեալ քուէներն 13 անունաց վրայ 9 էն մինչև 1 տարածեալ:

Սոյն քուէարկութեան մէջ ձեռննայահ կը մնան դարձեալ Տօքթ. Կ. Հիւնքեարպէյէնտեան, Տօքթ. Թիրեարեան, Ա. Սուրէնեան և Կ. Փանոսեան էֆէնտիք:

Ատենապետ էֆէնտի քուէարկութեան արգիւնը ծանուցանելով, Ա. Ատենադպիր ԿԸ ՀՈՉԱԿԷ՛ զՄիհրան էֆէնտի Չօպանեան, Բ. Ատենադպիր՝ զՆշան էֆէնտի Պոյաճեան, և Գ. Ատենադպիր՝ զՏիգրան էֆէնտի Հիւնքեարպէյէնտեան:

ՁՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Շնորհակալ եմ ձողովէն որ հաճեցաւ իւր քուէով զիս պատուել. բայց պարտք կը համարիմ ծանուցանել որ ես անկարող եմ վարել այդ պաշտօնը, և հետեւաբար կտարակուսիմ թէ չկարողանամ գոհացնել Ժողովն, ուստի կարծեմ աւելի լաւ կը լինի այժմէն իմ տեղս ուրիշ յարմարագոյն անձ մ'ընտրել:

[Ձանազան նստարաններէ մերժողական ցոյցեր]:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ չկայ այժմէն հրաժարելու. եթէ չկարենաք կատարել Ձեր պաշտօնն, առաջին դանգատն ես կը բառնամ Ձեզ դէմ և Ժողովին կը ծանուցանեմ: Կազաչեմ որ խնդիր չհանէք այժմ և թողուք աւարտել ընտրութեանց գործողութիւնը:

ՁՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես հրաժարելու մտօք չըսի, անկարող ըլլալս յայտնեցի, այսու

հանդերձ պիտի աշխատիմ Ժողովն գոհ ընելու երբ տեսնեմ թէ չպիտի կրնամ յաջողիլ և հետեւաբար արգելք պիտի լինիմ Ժողովոյ գործոց, յարմարագոյններուն տեղի պիտի տամ իսկոյն:

Ընտրութիւն Նախարանիչ Դիւանաց.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կարգն եկաւ Նախարանիչ Դիւանաց ընտրութեան, որոյ համար Մայր Դիւանս՝ ըստ օրինի՝ սրբազրելի ցանկ մը կը ներկայէ Ժողովոյդ: Այս ցանկը իւրաքանչիւր Դիւանի համար երեքական անուն կը պարունակէ, որոց մէջէն իւրաքանչիւր Երեսօխտան ազատ է չուզած անունը գծելու և տեղն իւր ուղած անունը գրելու: Այսպէս մէկ դարձ քուէարկութեամբ կընտրուին Նախարանիչ Դիւանաց անդամներն:

Աւասիկ Մայր Դիւանիս պատրաստած ցանկն:

[Ցանկը կը կարդայ]

Եւ ըստ որում Մայր Դիւանս՝ այն ինչ ընտրուած՝ հազիւ ուրեմն կրցաւ պատրաստել այս ցանկն, քուէարկութեան համար պահ մը համբերել պէտք է, որպէս զի պէտք եղած թուով ընդօրինակուի անկէ, Երեսօխտանաց ցրուելու համար: Բայց ես այժմէն հաղորդեցի զայն Ժողովոյն, և առձեռն գտնուած մի բանի օրինակներն ալ Երեսօխտանաց տրամադրութեան ներքե կը գնեմ, որպէս զի մէկ կողմանէ ընդօրինակուած միջոցին՝ միւս կողմանէ Երեսօխտանք ալ իրենց ընելիք սրբազրութեանց համար պատրաստուին:

Եւ եթէ կուզէք, մինչև որ ցանկերն ընդօրինակուին, առ կախ մնացած երկու ընտրական խնդիրներ կան Դիւանիս վրայ, մին՝ Պալատու թաղին, և միւր՝ Միջագիւղի, զանոնք ձեռք առնումք և անոնց լուծմամբն ըզրադիմք:

Ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ սոյն կարգադրու-
թեան, և Նախարանիչ Գիւանայ ընտրութեան
խնդիրն ընդհատելով, կանցնի ընտրական առ
կախ խնդրոց:

Պալատու ընտրութեան տեղեկագիրք.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պարտու թաղին Ե-
րեստիտանտիան ընտրութեանց տեղեկագի-
րքն՝ Ընտրողական Ժողովոյ զիւանին ստորա-
գրութիւնը չը կրելուն պատճառաւ, անբաւ-
կան տեսեր է զայն ժողովը նախընթաց նստին
մէջ, և օրինական թերին լրացուելու համար
ես դարձուցեր է: Առտի այսօր նոր տեղեկա-
գիր մ'եկած է Պարտու Ընտր. Ժողովն, որ
այդ թերին կը լրացնէ:

Կը կարգավոր զայն Ձեզ, որպէսզի եթէ
բաւական դատէր, Պալատու թաղին ընտրու-
թիւնները վաւերացուին:

Առեւտրողիկ Էֆէնտին կրնի թեանու հե-
տեւեալ տեղեկագիրն ու յանձնառագրերն:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր
Նախագահ Ազգ. Վարչութեան Երեստի-
տանական Պատ. Ժողովոյ.

Ըստ հրամանագրի Ձերդ Ամենա-
պատիւ Ս. Հայրութեան թաղիս հրա-
ժարեալ երեք երեստիտանայ յաջորդ-
ներ ընտրելու համար՝ Ընտրող. Ժողով
մի կազմուելով, ըստ օրինի հրաւեր
կարգացուեցաւ թաղեցւոց ի մասնակ-
ցութիւն քուէարկութեան:

Քուէարկութիւնը կատարուեցաւ 81
Մայիս 3, Ս. Եկեղեցւոյ մէջ, որուն մաս-
նակցած էին 61 քուէարկուք: Սոյն 61
քուէարկուներէն՝ Մեծ. Տիգրան Էֆէնտի

Բարաղամեան 50 քուէից բացարձակ ա-
ռաւելութեամբ երեստիտան ընտրուե-
լով, երկու ընտրելիներն համեմատակա-
նի մնացին, որոց ընտրութեան համար
վերստին քուէարկութիւն կատարուեցաւ
Մայիս 10: Սոյն երկրորդ քուէարկու-
թեան 47 քուէարկուք մասնակցեցան,
և որուն արդիւնքն եղաւ 31 քուէիւք
Մեծ. Յովհաննէս Էֆէնտի Եսայեանի
ընտրութիւնն, և 28 քուէիւք Մեծ. Սա-
հակ Էֆէնտի Ղազարոսեանի ընտրու-
թիւնն, սակայն Եսայեան Էֆէնտի հրա-
ժարական մատուցած ըլլալով, Ընտրող.
Ժողովս հարկ զգաց երրորդ անգամ
քուէարկութիւն կատարել, որուն մաս-
նակցեցան 42 քուէարկուք, և սոյն
վերջին քուէարկութեան արդիւնքն ե-
ղաւ 27 քուէով Կիւմիւշեան Մեծ. Մը-
կրտիչ Էֆէնտի ընտրութիւնն, Երեք
քուէարկութեան ալ անձամբ մասնակ-
ցեցան քուէարկուք:

Ամեն. Ս. Պատրիարք Հայր, սոյն
տեղեկագրոյն հետ կը պրկեմք նաև երեք
ընտրուելու ընդունելութեան դրերն,
խոնարհարար խնդրելով որ բարեհաճիք
ընդունիլ նաև մեր անկեղծ յարգանաց
հաւաստին:

Ի դիմաց Ընտրող. Ժողովոյ
Նախագահ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՐՇԱՐՈՒՆԻ

Առեւտրողիկ Առեւտրու
Յ. ճաճնաճեան Ա. Յ. Գատրեան

1881 Յունիս 9 Պալատ

Յանձնառագիրք ընտրելոց.

(Տես նիստ Բ. երես 70)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Անցեալ նստին՝
տեղեկագրին օրինական սրբամանները թերի
լինելուն համար ետ մնացեր էր այդ խնդրը.
բանի որ այժմ տեղեկագիրն ամբողջացած է,
պէտք է վաւերացնել ընտրութեան:

Առեւտրու Էֆէնտին տեսնելով որ Պա-
լատու տեղեկագրին զէժ զխտողութիւն ընող
չկայ, բուէի կրնէ անոր մէջ նշանակեալ բնա-
րութիւններն, և ժողովը միաձայն կը ՎԱԽԵ-
ՐԷ զանոնք:

Հետեւորար Առեւտրու Էֆէնտի Երես-
տիտան կը ՀՌԶԱԿԷ:

Տիգրան Էֆէնտի Բարաղամեան
Սահակ » Ղազարոսեան
Մկրտիչ » Կիւմիշեան

Տեղեկագիր Միջագիւղի եւ բողոքագիր ընդ-
դեմ Ընտրողական ժողովոյ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախընթաց նստին
առ կախ թաղեալ ընտրական երկրորդ խնդրն
է՝ Միջագիւղի ընտրութիւնն, որոց զէժ Ս.
Մանուկեան ստորագրութեամբ բողոքագիր մը
ներկայացեր է ժողովոյս, բայց ամբողջաբ-
եալ չլինելուն համար ետ է մնացեր:

Այս անգամ այդ բողոքագիրը ամբողջ-
գրեալ կը ներկայանայ: Բողոքարկու Ս. Մա-
նուկեան Միջագիւղի թաղ. Խորհրդոյ նկատ-
մամբ ալ զիր մ'ունի, որ կըսէ.

(Տես Գ. նիստ, երես 60)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — [Շարունակելով] Կը
տեսնեմ որ ասի թաղ. Խորհրդոյ զէժ բողոք
մ'է որ Վարչութեան կը վերաբերի, և անոր
պէտք էր մատուցուիլ: Հետեւորար ժողովոյ
համար խնդրոց նիւթ կը մնայ ընտրութեան

զէժ եղած բողոքն: Եւ ըստ որում չէ կար-
գացուեր այն անցեալ նստին, առանկ նորոս
համապատասխանը կը հաղորդեմ Ձեզ:

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԲՈՂՈՔԱԳՐՈՅՆ

Կը յայտնէ թէ Միջագիւղի թաղին
հրաժարեալ մէկ երեստիտանին տեղ 81
Մայիս 3 ին նոր ընտրութիւն կատարուած
միջոցին տեսնելով որ ընտրողաց ցանկէն
իր անունը դուրս ձգուած է և ընտրու-
թեան մասնակցելու հրաւիրագիր ըն-
դունած չէ. Մայիս 2 թուականաւ բողոք-
ագիր մ'ուղեր է Ընտրող. Ժողովոյ նա-
խագահին, որոյ ի պատասխանի անուղ-
ղակի կերպիւ «զխտողութեան ժամը
փակուած» ըլլալը ծանուցուեր է իրեն,
և որովհետեւ 8 օր վերջն այն է Մայիս
10 ին համեմատական քուէարկութիւն
պիտի կատարուէր, խոհեմութիւն հա-
մարեր է սպասել, յուսալով որ այն ա-
տեն թերեւ իր նախկին զխտողագիրը
նկատողութեան կառնուի, սակայն իր
այս յոյսն ի դերև ելած ըլլալուն կը բո-
ղոքէ իրեն զէժ եղած այս զրկանաց զէժ,
և յարելով թէ ճիշդ երկու տարի առաջ
ալ նմանօրինակ բողոք մը Ազգային Ժո-
ղովոյ ատենը բերած՝ բայց անլսելի
մնացած է, կը խնդրէ որ ուրիշ առ-
թիւ գարձեալ այսպիսի զրկանաց տեղի
չարուելու համար զէժ այս անգամ նկա-
տողութեան առնուի իւր բողոքն և դո-
հացում արուի իւր անբռնարարելի իրա-
ւանց:

Տ. Մ. ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Բողոքար-
կու անձը կըսէ թէ՛ երկու տարի առաջ իւր
նմանօրինակ մի բողոքն անլսելի մնացեր է
Ժողովս. այս մասին զիւանատան բացատրու-
թեանը կը կարօտի: Իսկ բուն խնդրոյն դա-

լով, պէտք է յանձնարարել վարչութեան որ բացատրութիւն պահանջէ թաղ. Խորհրդէն, և ըստ այնմ տեղեկագրէ ժողովոյս:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառաջարկեմ որ բողոքն ամբողջ կարգացուի, որպէս զի խնդրոյն մանրամասնութեանց տեղեկանամբ, չգիտցած բաներնուս համար ի՞նչ որոշում կարող եմք տալ:

Տ. ՅԱԿՈՒՅՆ ՎԱՐԴ. ԱՇՈՏ. — Վարչութեան կողմանէ մեզ եղած հրաւերին համեմատ Մալիս 3 ին քուէարկութեան ձեռնարկեցինք. բայց որովհետեւ ես պաշտօնով զիւղէն բացակայ կը գտնուէի նոյն օրը, զիւղին Աւագերէց Մանուէան Տէր Իգնատիոս Քահանայն, որ բողոքարկուին հայրն է, Նախագահեց Ընտրող ժողովոյ:

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — [Ընդմիջելով] Իբր Ընտրող ժողովոյ Նախագահ կը խօսի Տ. Յակոբ վարդապետ, թէ իբր Երեսփոխան:

Տ. ՅԱԿՈՒՅՆ ՎԱՐԴ. ԱՇՈՏ. — Իբր Երեսփոխան խօսք առի, և անշուշտ՝ իբր Միջագիւղի Ընտրողական ժողովոյ Նախագահ ալ՝ պիտի աշխատիմ խնդիրը պարզելու, ունեցած տեղեկութիւններս հաղորդելով:

Արդ՝ ինչպէս ըսի, քուէարկութեան օրը բացակայ լինելով՝ Ընտրող ժողովոյ նոյն օրուան ատենագրութենէն բաղած տեղեկութիւններս պիտի յայտնեմ ժողովիդ:

Ընտրող ժողովոյ անդամներն էին.

Տ. Իգնատիոս Աւագ քահանայ Մանուէան, Յակոբ էֆէնտի Նորատունկեան, Տիգրան էֆէնտի Եուսուֆեան, Յարութիւն էֆէնտի Նորատունկեան, Սահակ էֆէնտի Ղազարոսեան, Միքայէլ էֆէնտի Մազսուտեան . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — [Ընդմիջելով] Այդ անուանց ցանկը կարգաւ հարկ չկայ. ատեն

նագրութեան խնաստը ամփոփեցէք, կաղաչեմ:

Տ. ՅԱԿՈՒՅՆ ՎԱՐԴ. ԱՇՈՏ. — [Շարունակելով] Ատենագրութիւնը կըսէ թէ՛ նոյն օրը Ս. Մանուէան ստորագրութեամբ բողոքագիր մ'եկած էր, բայց որովհետեւ ամեն բողոքագիր կամ տեղեկագիր հարկ է քուէարկութենէն գոնէ մի օր յառաջ մատուցանել, Ընտրող ժողովն անտեղի համարեր է զայն: Արդէն՝ կանխաւ մեր բրած յայտարարութեան մէջ ըսած էինք թէ՛ ով որ ընտրելեաց ցանկին վրայ զիտողութիւն ունի, և կամ իւր անունը ընտրողաց ցանկին մէջ չէ նշանակուած ու կուղէ քուէարկութեան մասնակցիլ, պարտի քուէարկութենէն գոնէ մի օր առաջ Ընտրող ժողովոյ Նախագահին զիմել: Արդ, ես ստուգած եմ որ այդ բողոքը՝ քուէահամարը կատարելու համար տուիք բացուած ժամանակ եկած է. ուստի Ընտրող ժողովն իրաւունք ունէր անտեղի համարելու զայն: Եւ որովհետեւ նոյն օրը բացարձակ քուէ ստացող չէ գտնուեր, որոշուեր է ութն օր ետք կրկին քուէարկութիւն կատարել համեմատականաց վրայ: Երկրորդ քուէարկութիւնն իմ Նախագահութեան ներքեւ կատարուեցաւ ութ օր վերջը, և նոյն օրն որ և է բողոք տեղի չունեցաւ. ուստի քուէարկութիւնն օրինաւորապէս կատարեցինք և երեսփոխան ընտրուեցաւ Մկրտիչ էֆէնտի ճանըմեան: Հետեւաբար ընտրութեան տեղեկագիրը մատուցինք Վարչութեան:

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — Երկրորդ անգամին ինչո՞ւ հրաւեր չէ գացեր բողոքարկուին. մի թէ բողոքը բողոք ըլլալէ կը դադրի՞, վրայէն ութն օր անցած լինելուն համար:

Տ. ՅԱԿՈՒՅՆ ՎԱՐԴ. ԱՇՈՏ. — Երկրորդ քուէարկութեան հրաւիրագրերուն մէջ ըսուած էր թէ՛ զիտողութիւն ունեցողը մինչև շաբաթ օր պէտք է Ընտրող ժողովոյ Նախագահին զի-

մէ: Արդ, ըսա որում բողոքարկուն երկրորդ անգամին չը բողոքեց, քուէարկութիւնը կատարեցինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք խնդիրն. ստուգելի կէտ մ'է թէ՛ համեմատական քուէարկութեան ատեն բողոքարկուն ինչո՞ւ չէ կրկներ իւր բողոքն և կամ Ընտր. ժողովոյ կողմէն ի՞նչ պատճառաւ չէ հրաւիրուէր քուէ տալու: Ընտր. ժողովոյ Նախագահին բացատրութիւններն ալ լսեցիք, որ սակայն բաւական չեղան զՁեզ գոհ ընելու: Եւ արդէն վախաբեցի է որ այս կարգի խնդիրներն աւելի հասուն վիճակի մէջ ներկայանան ժողովոյդ, և երկար ատեն չը գրաւեն: Ուստի եթէ չէք ուզեր որ այս խընդրոյն մանրամասնութիւնքն ի յայտ ածելու համար ժողովն իւր ժամանակը վատնէ, յղենք զայն Նախաձեռնութեան Դիւանին, թող սակաւարէ նախաքննութիւնն, ու խնդիրը պարզելով իւր տեղեկագիրը ներկայէ:

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Քրիստոստուր էֆէնտի օրինաւոր առաջարկութիւն մ'ըբաւ, ըսելով թէ բողոքը պէտք է կարգացուի, որպէս զի խնդրոյն մանրամասնութեանց տեղեկանալով կարենամք որոշում մը տալ:

Շատ ճշմարիտ է ասիկայ, բայց ըստ որում անոր ամփոփումն իմացաւ ժողովս, ըստ իս՝ հարկ չկայ կարգաւ. և արդէն ես քիչ շատ տեղեկութիւն առած եմ խնդրոյն պարագայներուն վրայ: Քանի մը թաղեցիք այս մասին ինձ՝ իբր խմբագրի՝ նամակ մը գրած էին զոր հրատարակեցի. այս առթիւ խնդիրը բաւական սերտած եմ: Այս անձինք, որոց քուէթուղթ չէ զրկուեր, յատկապէս բողոքեր և յայտարարեր են թէ իրենք կարող են 75 զրէտուրք վճարելու, սակայն այդ բողոքագրերն ուշադրութեան չեն առնուեր: Քանի որ մէկը 75 զրէտուրք պիտի վճարեմ կըսէ, բնաւ իրաւունք չէ զայն քուէարկութենէ զրկել:

Բայ աստի, հակասութիւններ նշմարեցի

Տ. Յակոբ վարդապետի բացատրութեանցը մէջ: Հակասութիւն առաջին. — բողոքարկուն երկու տարի առաջ ալ բողոքեր է եղեր. ուրեմն պէտք չէ՞ որ յառաջուց նմա քուէարկութեան հրաւեր զրկէին: Հակասութիւն երկրորդ. — բողոքը քուէտուփին բացուելու ժամանակ հասեր է եղեր, ուրեմն, քանի որ դեռ քուէտուփը չէր բացուած, պէտք էր կարգաւ զայն, թերեւս ընտրութիւնը բեկանելու զօրութիւն ունէր: Հակասութիւն երրորդ. — Տ. Յակոբ վարդապետ կըսէ թէ՛ համեմատական քուէարկութեան ժամանակ սոյն բողոքն ի նկատ չառնուեցաւ. բայց միթէ յայնժամ բողոքը բողոք լինելէ դադրած էր, պէտք չէ՞ որ գոնէ երկրորդ քուէարկութեան համար ուշադրութեան առնուէր: Յայտնի կը տեսնուի թէ բողոքով անձին զէմ պարզ զրկողութիւն մ'եղած է: Ուստի կեզրակայնեմ որ, ինչպէ՞ ուստե՞նապետ էֆէնտին յիշեցուց, պէտք է Նախաձեռնութեան Դիւանին յղուի այդ բողոքը:

ՋԱՅՆԵՐ. — Հակառակող չկար արդէն մեր մէջ:

Հետեւաբար Ատենապետ էֆէնտին բուէի կը դնէ Միջագիւղի ընտրութեան զէմ յարուցեալ բողոքն, և ժողովը կ'ը ՅՂԷ զայն առ Դիւանն Նախաձեռնութեան ի նախաքննութիւն, առկախելով ընտրութեան վաւերացումը:

Շարունակուիրին Նախաքննիչ Դիւանաց ընտրութեան.

Նախաքննիչ Դիւանաց համար Մայր Դիւանին պատրաստած ընտրելեաց սրբագրելի ցանկն ընդօրինակուած ըլլալով, Ատենապետ էֆէնտի ցրուել կուտայ զայն Երեսփոխանաց,

և կը հրախրէ սրատարատուիլ քուէարկութեան, ցանկն իրենց ուզածին պէս սրբագրելով :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Առաջին անգամ խօսք առնելով խնդրեմ ներազատիտ եղիք ինձ որ համարձակիմ զխտորութիւն մ'ընելու : Ինչ պէս ասիէ առաջ տեսար, Մայր Դիւանի ընտրութեան մէջ ձեռնդրած գտնուեցայ . այժմ հարկը կատարել զիս որ Նախարանիչ Դիւանաց ընտրութեան ալ չը մասնակցիմ : Այս ընտրութեանց մէջ ձեռնդրած լինելու քանի մը պատճառներ ունէի, նախ որ 40 ի շախ նորընտիր Երեսօխոսաններ՝ առաջին անգամ լինելով՝ ժողովոյս ներկայ կը գտնուէր այսօր, առանց զիրար ճանաչելու : սոքա չեն ճանաչեր նաև Հին Երեսօխոսանները, և փոխադարձաբար Դիւանը պարտաւոր էր պաշտօնապէս ներկայացնել զմեզ իրերաց, բայց չըբաւ : Արդ քանի որ չէի ճանաչեր իմ պաշտօնակիցներս, չէի կրնար նաև որոշել թէ ի նոցանէ ո՞ք են արժանաւորագոյնք : ուստի ստիպուեցայ ձեռնդրած գտնուիլ Դիւանի ընտրութեան ժամանակը Նոյն պարագային մէջ եւ և հիւստի, ևս չեմ ճանաչեր իմ Երեսօխոսան ընկերներն, որպէս զի կարենամ Նախարանիչ Դիւանաց անդամներ որոշել անոնց մէջէն : Եւ որովհետեւ շատ կարեւոր խնդիր է ինձ համար քուէարկութեան խնդիրն, հարկ է որ նոր և հին Երեսօխոսանքս նախ զիրար ճանաչեմք՝ քուէարկութենէ առաջ : Երկրորդ խնդիր մ'ալ կայ որ ուշադրութեան արժանի է : Ետ մը Նախարանիչ Դիւաններ պիտի ընտրուին այժմ, զանազան անուամբ . ևս այս գիտնաց իբր քան իբրին պաշտօնին սահմանը չեմ գիտեր, նոյնպէս միս Երեսօխոսանք ալ չեն գիտեր զայն : Ժողովոյս ներքին կանոնադիրը մեզ չը տրուեցաւ յառաջաց, որպէս զի կարենայինք սոյն Դիւանաց պաշտօններն սերտել և ըստ այնմ մեր քուէներն պատրաստել, իբր քան չիւր պաշտօնին յարմար անձեր ընտրելով : Առաջ կառաջարկեմ որ նախ Երեսօխոսանները ընտրեն մէջ մէկ որինակ մեզ տրուի, ապա,

յաջորդ նստին կատարեմք Նախարանիչ Դիւանաց ընտրութիւնն : Առանց ասոր մեր պաշտօնը խղճի մտօք վարած չեմք կարող լինիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք որ Սուրէնեան էֆէնտի խօսքին առաջին մասը՝ տեսակ մ'արդարացուցման պատճառարանութիւն է, Մայր Դիւանի ընտրութեան չը մասնակցելուն . . . :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — [Ընդմիջելով] Ներկեցէք . ևս ամբաստանուած չեմ որ խնդիրս արդարացուցեմ, իմ ըրածս զխտորութիւն մ'էր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — [Շարունակելով] . . . որով Սուրէնեան էֆէնտի ժողովոյն հասկցնել կը ջանայ այն պատճառներն, որոցմէ իրատուք ստացած էր Մայր Դիւանի ընտրութեան համար քուէ չտար : Վասն զի, կրտէ, ինքն նորեկ է և չճանաչէր իւր պաշտօնակիցներն, և զանոնք իրարու ներկայացնելու պարտաւոր կենթադրէ զՄայր Դիւանն, և թերեւս յանցադարձ՝ այնպէս ըրած չըլլաւն համար : Եւ այս պատճառարանութեան վրայ հիմնելով Նախարանիչ Դիւանաց ընտրութեան ալ այսօր մասնակցելու անկարող լինելը կը յայտարարէ և ըստ որում անոնց խրատանջիւրի պաշտօնաց սահմանն ալ չգիտէր, ժողովոյս ներքին կանոնադրէն իրեն օրինակ մը տրուած չըլլաւն համար, կառաջարկէ որ ընտրութիւնը յաջորդ նստին յետաձգուի, որպէս զի այդ պարագաները սերտելու ատեն ունենայ : Մտնուանդ թէ կը կարծէ որ նորընտիր Երեսօխոսանք ընդհանրապէս անտեղեակ են այս պարագաներուն, և թէ Նախարանիչ Դիւանաց ընտրութեան յառաջ՝ զանոնք սերտելու պէտք ունին :

Արդ եթէ Սուրէնեան էֆէնտի օրինաց տրամադրութենէն ցոյց առած ըլլար որ ժողովոյս Դիւանը պարտաւոր էր Երեսօխոսանները իրարու ներկայացնել, անտարակոյս կը պատասխանէին իրեն անոնք, որոց պիտի վերս

բերէր այդ անկարկութիւնը : Եւ սակայն՝ որպէս զի հին և նոր Երեսօխոսանք զիրեար լուճանաչեն, ևս իսկ էի՝ Թորոսեան ֆէնտիին ձայնակցելով՝ ի սկզբան առաջարկողն որ Մայր Դիւանին ընտրութենէն յառաջ միջոց տրուի Երեսօխոսանաց ընդհանուր ցանկն աչքէ անցընելու և զաղափարաց փոխանակութիւն մ'ընելու, որոց հաւանեցաւ ժողովը և Առժամեաց Դիւանն այս պատճառաւ սրտէ մը դադար տրուած ժողովոյն, յորում ինձ պէս և շատեր իրենց քուէն պատրաստելու միջոցներն ի կիրատին : Ի վերայ այս ամենայնի ամեն Երեսօխոսան աղատ է, երբ որ ուզէ, ձեռնդրած մնալու քուէարկութեան մէջ, և աւերող ալ խտորութիւն է այն մասին բացատրութիւն տալու երևի : Զեռնուհաւթիւնը Թորոսեանեան կան օրինաց մէջ յատկապէս նշանակեալ արտօնութիւն մ'է, զոր անձնաբ Երեսօխոսան իրեն համար կը վայելէ, երբ պատշաճ դատէ :

Գալով Նախարանիչ Դիւանաց պաշտամունքը Սուրէնեան էֆէնտիի զխտորութեան անարկութեան, ժողովը չպիտի կրնայ ընդունիլ զայն սկզբամբ . վասն զի որ և է Երեսօխոսանի համար, որչափ և նորեկ կուզէ լինի, չէ կարելի ենթադրել որ Նախարանիչ Դիւանաց պաշտամունքը չըլլանայ կամ առանց սովորելու իրր Երեսօխոսան ներկայանայ աստ : Ժողովը Սուրէնեան էֆէնտիի ընտրութիւնը վաւերած վայրկենէն զանի աղքատին դործոց հմուտ և տեղեակ կը ճանչէ, զի Երեսօխոսանութեան անհրաժեշտ մի պայմանն ալ այդ է :

Եւ ըստ որում այս կարգի անարկութեամբ օրակարգին մէջ նշանակեալ խնդիրն չյետաձգուիր, կադուցեմ որ Երեսօխոսան Տեարք բարեհաճին Նախարանիչ զիւանաց ընտրութեան համար իրենց քուէն պատրաստել :

Սոյն՝ միջոցին Սուրէնեան էֆէնտի կընդմիջէր ստիպ Առնեապետ էֆէնտիին խօսքին, և ի վերջէ խօսք կուզէր պնդելով բացատրութեան տալու համար : Փոփոխեան էֆէնտի ալ

ձայն կը բառնար ի սաշտօնաւորութիւն Սուրէնեան էֆէնտիի : Եւ սակայն Առնեապետ էֆէնտի յայտարարեց թէ չի կրնար խօսք տալ այլ ևս, մինչդեռ փակման ժամը կը մերձենար և՛ խօսքն երկարելով՝ Նախարանիչ Դիւանաց ընտրութիւնն անհնար կը լինէր :

Եւ ըստ որում յիշեալ Երեսօխոսանք բաւերկարութիւնը խանգարելու չափ յառաջ կերթային, Առնեապետ էֆէնտի յարեց թէ ժողովոյն կամաց պիտի դիմէ :

ԳՍՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կանոնադրական զխտորութեան համար խօսք կը խնդրեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Գախաւման էֆէնտիինն է :

ԳՍՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Առնեապետ էֆէնտի, ներկեցէք ինձ հարցնել թէ՛ ի՞նչպէս կրնար միջաբանութեան փակումը քուէի գնելքանի որ Երեսօխոսաններն խօսիլ ուղղ կայ, և քուէ պահանջող չկայ : Կը բողոքեմ Ձեր այդ ընթացքին դէմ, որովհետեւ կանոնադրութեան հակառակ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսչափ է Ձեր կանոնադրական զխտորութիւնը, Գախաւման էֆէնտի :

ԳՍՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այո :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գախաւման էֆէնտի ըրած զխտորութիւնը պիտի արձանագրուի : Արդ կը խնդրեմ որ ժողովը իւր կամքը յայտնէ թէ՛ խօսք խնդրողներուն խօսք տա՞լ կուզէ, եթէ անմիջապէս Նախարանիչ Դիւանաց ընտրութիւնը կատարել :

Զայս ըսելով, Առնեապետ էֆէնտին քուէի դրաւ, և ժողովը 5 ձայնի դէմ 21 ձայնիս ՈՐՈՇԵՑ Նախարանիչ Դիւանաց ընտրութիւնը կատարել անմիջապէս :

ԲՈՂՈՔԱԳԻՐ

ԸՆԴԴԷՄ ՄԻՋԱԳԻՒՂԻ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Վսեմաշուք Ատենապետ տէր

Ազգ. Երեսփոխանական ժողովոյ

Թաղիս մի հրատարեալ Երեսփոխանի տեղ (ՏԱ) ութսուն և մէկ մայիս Յին նոր ընտրութեան ձեռնարկուած ատեն տեսնելով որ ընտրողաց ցանկին մէջ է զ՝ Էրզրումի գուրս ձգուած է, և ոչ ալ ընտրութեան մասնակցելու հրաւիրագիրը եկած, պարտաւորեցանք Ընտրողական ժողովոյ նախագահի ՏԱ Մայիս 2 թուականու հետեւեալ բողոքագիրն յղել:

Արժանապատիւ նախագահ Ընտրող ժողովոյ Միջազիւղ

Թաղիս մի հրատարեալ Երեսփոխանի տեղ նոր Երեսփոխանի մը ընտրութեանց նամակներն տեսանք հասարակութեանց ձեռքը որոց մէջ կը հրաւիրէիք ընտրողը իւր ընտրութեան իրաւանց մասնակցելու: Մենք չունեցանք նոյն հրաւերն ընդունելու բարեբաղդութիւնը և միանգամայն չը տեսանք նաև ընտրողաց ցանկին մէջ մեր անունը:

Ազգ. Սահմանադրութեան 67րդ, յօդուածոյ տրամադրութիւնը բացարձակապէս կը զրկէ քրէական յանցապարտներ, նենդողներ, դատապարտեալներ, դատատացուցիչ պատժոյ ենթարկեալներ, և վերջապէս խեղագարներ: Աւելորդ է ըսել թէ սոցա և ոչ մէկը ինձ կը պատկանի, իսկ այլ է երբ

պատուարժան Ընտրող ժողովք անշուշտ իրաւացի վճիռ մը որոշած ըլլայ:

Իսկ առանց զրկելու չեն կրնար մասնակցիլ Սահմանադրութեան 63—66 յօդուածոց համեմատ, երբ կամ ընտրողական անձնական արժանիք չունին և կամ 73 զրչ. 73-րդ չեն վճարեր, ասոցա ի սիրտ կը պարտաւորիմ խոստովանիլ թէ ըստ ընտրողականութեան անձնական արժանիք չունիմ:

Արդ՝ տէր, ինչպէս կը տեսնէք նաև գուրք, և ոչ մէկ տրամադրութիւն զիս և ինձ նման զրկեալքս յանուն օրինաց զրկուած եմք, քանի որ 23 տարին ալ լրացուցած եմք. ուստի մեզ նկատմամբ եղած զրկանաց պատճառը յայտնապէս Ազգ. տուրքն է: Բայց, Տէր, ներելի է մեզ հարցնել թէ ո՞ւստի կրցիք գիտնալ թէ ես Ազգ. տուրք չեմ վճարեր, և կրնա՞ք երաշխաւորել թէ չը պիտի վճարեմ կամ վճարել կարող չեմ: Նախագահ Տէր, կարծեմ չէք մոռցած որ նրմանօրինակ խնդիր մ'ալ անցեալ ընտրութեանց ժամանակ տեղի ունեցաւ և որ ընտրելեաց Էրզրումի մասին ունեցած յարդանքնիս մեզ կասեցնել տըւաւ: Իբր նախագահ՝ գուրք աւելի լաւ պէտք էիք գիտնալ թէ պարտականութիւն ունէիք ըստ ընտրական հրահանգաց մէն մի անհատ հրաւիրել իւր Ազգ. տրոց աստիճանը գրաւոր կերպիւ որոշելու համար խղճի հանդարտութեամբ պիտի կրնաք ըսել թէ այսպիսի հրաւեր մը թէ ինձ և թէ ժողովրդեան եղած

չէ. անշուշտ բացառութիւններ կը գըտուին և աւելորդ է ըսել թէ՛ մեր բողոքն այդ բացառութեանց համար է :

Արդ, Նախագահ Տէր, ցուցուցէք ինձ այն մարդը որ վճռած է թէ այս ինչ մարդը օրը 8 1/2 փարսյ չը կրնար վըճարել իւր առ Ազգն ունեցած պարտուց համար, և ի միասին հաճեցէք իմացնել ինձ և հրապարակաւ յայտարարել այն վճիռը որ կարգելու զիս ընտրութեանց մասնակցելու, զի մի գուցէ այլ տեղ սխալմամբ զրկեալի մը տան այն իրաւունքներն որ Ձեր կարծեցեալ օրէնքը և Ձեր գովելի նախանձախնդրութիւնը կապտած են զայն ինձմէ, և սակայն, Նախագահ Տէր, խոնարհաբար կուզամ գիտել տալ Ձեզ այն թերութիւնքը որք տեղի ունեցած են ընտրողաց ցանկի առանձնաշնորհեալ անձանց մէջ, թէ՛ հակառակ Սահմանադրութեան 65—66 յօդ. կը գտնուին 25 զրշ տուրք վճարողներ, օտար տէրութեան հպատակներ, որմէ ինքնին կը հետեւի թէ օտար ոգի Ձեզ սկզբունք ընտրած էք քան թէ Սահմանադրութեան, և ի վերջոյ, Նախագահ Տէր, սոյն տողերս անտեղի մեկնութեանց և օտար կարծեաց տեղի չը տալու համար, կը փութամ յայտարարել թէ՛ երբ ինձ նման զրկեալներու շարք մը կը ներկայացնեմ ո՛չ ճնշման համար որչափ արդարութեան, գիտնալով միանգամայն որ արդար և իրաւացի դատ մը առանց բանակներու, առանց ժողովրդական յուզման, կրնայ օրինաւոր լուծում ստանալ, որով կրնամ ապահով ըլլալ թէ սոյն արդար և իրաւացի բողոքս թիւր մեկնութեանց տեղի չի տար :

Մնամ Ձեր Սրբութեան
խոնարհ օրդի
Ս. Մանուկեան

Արդ, վսեմաշուք Տէր, քուէարկութիւնը կատարուելէ վերջ, ի պատասխանի բողոքադրոյս անուղղակի կերպիւ առարկուեցաւ թէ գիտողութեան ժամը փակուած է, թէև 24 ժամ առաջ յըլուած էր այն բայց սրովհետև 8 օր վերջ այն է մայիս 10 համեմատական քուէարկութիւն պիտի կատարուէր, խոհեմութիւն սեպեցի ըսել, յուսալով որ այս անգամ մեր մայիս 2 թուով բողոքագիրս ընտրող, ժողովոյ կողմէ ուշադրութեան կառնուի իբր ժամանակին ներկայացուած :

Բայց ԳԺԳԳԳԳԳԳ ԳԵԳԳԳԳԳԳ
որով այլ ևս անհանդուրժելի ըլլալով ըսել մեր անբռնաբարելի իրաւանցը դէմ ի դործ գրուած զրկանաց և ճնշման, ներկայիւս կը փութամ երկրորդ անգամ պատկառելի երեսփոխանական ժողովոյդ գիմել, վստահ ըլլալով որ այս անգամ ուշադրութեան կառնու սոյն արդար բողոքը, զի ճիշդ երկու տարի առաջ, ինչպէս կը տեսնուի 79 մայիս 11 ատենադրութեան մէջ, նմանօրինակ խնդիր մ'ալ ժողովոյդ ատենանը բերած բայց դժբաղդարար անլսելի մնալով առիթ տուած եղաւ սոյն կրկնակի զրկանաց :

Ուստի կը խնդրեմ պատկառելի ժողովէդ որ ուրիշ առթիւ դարձեալ այսպիսի զրկանաց տեղի չի տալու համար, դէթ այս անգամ բարեհաճի ուշադրութեան առնուլ սոյն բողոքագիրը դժացում տալով մեր անբռնաբարելի իրաւանցը :

Որով մնամ
Ամենախորին յարգանք
Ս. Մանուկեան

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ Վ.Ա.ՐԶՈՒԹԻՒՆ

Կրօնական գործոց խորհրդական Գեր. Տ. Սիմօն Եպիսկոպոս Սէֆէրեան
 Ներքին գործոց » Տիգրան Էֆէնտի Եռուսուֆեան Արեւ-դե-ր
 Յարաբերական գործոց » Միքայէլ » Մօմճեան
 Կրթական » » Միքայէլ » Մամիկոնեան
 Դատական » » Սերովբէ » Ազնաւորեան
 Տնտեսական » » Գարեգին » Մէլիք Արեւ-դե-ր

ԿՐԾՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոս Սերովբեան
 » Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան
 » Տ. Յակոբ » Փափաղեան
 » Տ. Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէյէնտեան
 » Տ. Սահակ » Տէր Սարգիսեան

ՔԱՎԱՔԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Ազգ. քսանդր Էֆէնտի Մէրեէմ—Գուլի
 Թովմաս » Խօրասանճեան
 Կարապետ » Շահապաղ
 Պապի » Պապօեան
 Սենեքէրիմ » Մանուկեան

